

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2019Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 251300 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 137400-ը քաղաքաբնակներ են (54.7%), 113900-ը՝ գյուղաբնակներ (45.3%):

2019թ. առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 81.0 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 79.6 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն աճել են 1.7%-ով: Այսպես, 2019թ. առաջին կիսամյակում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 56.8 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 5.5 մլրդ. դրամով կամ 10.8%-ով: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում խմիչքների (21.0%), սննդամթերքի (2.0%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (13.6%), հիմնային մետաղների (36.9%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում գրանցվել է 4.3% աճ կամ արտադրվել է 1.5 մլրդ. դրամի արտադրանք: Իսկ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները նվազել են 18.5 %-ով կամ արտադրվել է 21.5 մլրդ. դրամի էլեկտրաէներգիա:

2019թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 81.0 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 81.1 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալները նվազել են 0.3%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 58.3 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 22.7 մլրդ. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 14.3 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 8.4 մլրդ. դրամի արտադրանք: 2019թ. առաջին կիսամյակում արտադրանքի արտահանման ծավալը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 24.8%-ով:

Մանրաձախ առևտրի շրջանառության ծավալը 2019թ. առաջին կիսամյակում կազմել է 29.0 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 4.3 %-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 65.8 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 53.9 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 22.1 %:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է 3.8 հազ. տոննա միս, ինչը 11.6%-ով պակաս է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրվածի համեմատ: Կաթի արտադրության ծավալը նվազել է 3.8 %-ով կամ արտադրվել է 38.8 հազ. տոննա կաթ, իսկ ձվի արտադրության ծավալը կազմել է 74.6 մլն. հատ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ ավել է 4.5%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում կատարվել են 9.5 մլրդ. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 7.9%-ով: